ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 18-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 12-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1671-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 3-րդ կետի պահանջը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ և 9-րդ ենթակետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),

2) ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության պետի տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ),

3) ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ծառայության վարչության պետի տեղակալ,

4) ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի պետ,

5) ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի պետի տեղակալ, ինքը և մասնավոր պահնորդական գործունեության վերահսկողության բաժանմունքի պետ,

6) ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի պետ,

7) ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի մասնավոր պահնորդական գործունեության վերահսկողության բաժանմունքի հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ (հանձնաժողովի քարտուղար):

2. Հաստատել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի փետրվարի 25-ի «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կազմը և հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 12-Լ հրամանը:

4. Հրամանը ծանոթացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավասու ծառայողներին (աշխատողներին):

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

« 14 » 06 2023թ.

քաղ.Երևան

Հավելված

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի
նախարարի տեղակալի 2023թ. հունիսի 14-ի
թիվ 18-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունում (այսուհետ՝ ՆԳՆ ոստիկանության) գործող թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) ստեղծվում և փոփոխվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի հրամանով (այսուհետ՝ լիցենզավորող մարմնի ղեկավար):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրը թիկնապահի կամ պահնորդի մասնագիտական կրթություն ստացած անձի (անձանց) որակավորման ստուգումն է:

4. Հանձնաժողովն իրեն վերապահված խնդրին համապատասխան և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) որակավորման ստուգում թեստավորման առաջադրանքների միջոցով՝ էլեկտրոնային եղանակով,

2) որակավորման ստուգման դրական գնահատականների հիման վրա որոշման ընդունում՝ թեկնածուներին որակավորման ստուգման վկայականներ տրամադրելու վերաբերյալ,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և դրանց նախորդող նախապատրաստական միջոցառումների իրականացման միջոցով, նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

6. Հանձնաժողովն իրավազոր է, եթե ապահովվել է հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցությունը:

7. Հանձնաժողովի գործունեությունն ուղղված է թիկնապահների և պահնորդների որակավորման ստուգումը պատշաճ կերպով կազմակերպելուն:

8. Հանձնաժողովի նիստերի ընթացքի և ընդունված որոշումների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և քարտուղարը:

9. **Հանձնաժողովը՝**

1) կազմակերպում և իրականացնում է որակավորման ստուգման աշխատանքները.

2) ընդունում է որակավորման ստուգմանը մասնակցելու համար դիմած անձի (անձանց) կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը, քննության առնում դրանց ճշտությունն ու ամբողջականությունը.

3) համապատասխան հարցումներ կատարելու միջոցով պարզում է թեկնածուի կողմից դիտավորյալ հանցագործություն կատարած լինելու կամ դիտավորյալ հանցագործության համար դատվածության՝ սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու, ինչպես նաև համապատասխան բուժհիմնարկներում հոգեկան խանգարման, հարբեցողության կամ թմրամոլության հիմքով հաշվառված չլինելու հանգամանքները.

4) կազմում է որակավորման ստուգման թեստավորման հարցաշարերը և թեստավորման առաջադրանքները՝ ըստ թիկնապահի և պահնորդի մասնագիտությունների.

5) որակավորման ստուգման թեստավորման հարցաշարերը ստուգման օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս առաջ պարտադիր հրապարակում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում www.azdarar.am հասցեով.

6) որակավորման ստուգմանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետների վերաբերյալ որակավորման ստուգումից առնվազն 1 ամիս առաջ ՆԳՆ ոստիկանության՝ www.police.am պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.azdarar.am հասցեով տալիս է իրազեկում.

7) որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ ստուգմանը մասնակցող թեկնածուներին պատշաճ կերպով ծանուցում է՝ որակավորման ստուգումից առնվազն 7 օր առաջ: Ծանուցումը տրվում է գրավոր՝ ըստ անձի նշած հասցեի, իսկ նրա ցանկությամբ նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով.

8) հրապարակում է որակավորման ստուգման օրվա արդյունքները՝ նույն օրն ամփոփելուց հետո 1 ժամվա ընթացքում.

9) քննարկում է որակավորման ստուգման արդյունքների հետ կապված բողոքները, որոնց պատասխանում է նույն օրը.

10) որակավորման ստուգման արդյունքներով 10 աշխատանքային օրվա ընթացքում թեկնածուներին տրամադրում է որակավորման ստուգման վկայականներ.

11) ընդունում է որակավորման ստուգման հետ կապված այլ որոշումներ.

12) իրականացնում է սույն հրամանով սահմանված այլ լիազորություններ:

10. Հանձնաժողովի անդամի՝ նիստին հարգելի պատճառով մասնակցության անհնարինության դեպքում այդ մասին պատշաճ տեղեկացվում է հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը:

11. Հանձնաժողովը որոշումներն ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ:

12. Քվեարկությանը մասնակցում են հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և նիստին ներկա անդամները:

13. Քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում որոշումն ընդունվում է թեկնածուի օգտին:

14. **Հանձնաժողովի նախագահը՝**

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները, հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) հսկողություն է իրականացնում որակավորման ստուգման բնականոն ընթացքի ապահովման ուղղությամբ,

3) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունները և ընդունված այլ որոշումները,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

15. Հանձնաժողովի նախագահի՝ նիստին չմասնակցելու դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

16. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում վերջինիս պարտականությունները ստանձնում է հանձնաժողովի անդամներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

17. **Հանձնաժողովի քարտուղարը՝**

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) ընդունում, հավաքում և պահպանում է անձանց կողմից որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը.

3) հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկում է հանձնաժողովի անդամներին.

4) արձանագրում է հանձնաժողովի նիստի ընթացքը, ստորագրում նիստի արձանագրությունը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

18. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19. Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո հանձնաժողովի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և այլ նյութերն ենթակա են պահպանման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: